

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի խորհրդի  
2005 թվականի հունիսի 22 թիվ 317 Ն որոշման

Համաձայնեցված է

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության  
ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի  
2005 թվականի հուլիսի 8-ի

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի խորհրդի  
2005 թվականի հունիսի 22-ի  
թիվ 317 Ն որոշմամբ

թիվ 716 Ն հրամանով \_\_\_\_\_

## ԿԱՐԳ

### **ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

1. Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները (այսուհետ՝ կազմակերպությունները) առանձին վարում են իրենց կողմից մատուցված վճարահաշվարկային ծառայությունների հաշվառում: Հաշվառումը վարվում է դրամական փոխանցումների գծով մատուցված ծառայությունների գրանցման միջոցով:
2. Հաշվառումը տարվում է ամփոփ և ըստ տվյալ կազմակերպության աշխատանքային օրերի:
3. Հաշվառումը տարվում է ըստ հետևյալ տարրերի՝
  - 3.1 կազմակերպության կողմից դրամական փոխանցումների իրականացման համակարգերի, այն է՝
    - 3.1.1 դրամական փոխանցումների ոչ բանկային այլընտրանքային համակարգերի (Վեստերն Յունիոն, Մոնեյ Գրեյ և այլ նմանատիպ համակարգերի) միջոցով վճարումների իրականացումը,
    - 3.1.2 կազմակերպության ներքին (մասնաճյուղային) ցանցի միջոցով վճարումների իրականացումը,
    - 3.1.3 բանկի կամ այլ կազմակերպության միջոցով վճարումների կատարումը:
  - 3.2 Ըստ 3.1 ենթակետում նշված յուրաքանչյուր դրամական փոխանցումների իրականացման համակարգի՝ առանձին նշվում են ընդունված (ուղարկված) և վճարված (ստացված) դրամական միջոցները:

Ընդունված (ուղարկված) են համարվում հաշվետու օրվա ընթացքում կազմակերպության կողմից ստացված դրամական միջոցները, որոնք վճարողների կարգադրությունների համապատասխան կազմակերպության կողմից պետք է վճարվեն համապատասխան շահառուներին:

Վճարված (ստացված) են համարվում հաշվետու օրվա ընթացքում կազմակերպության կողմից շահառուներին վճարված դրամական միջոցները:

3.3 Կազմակերպության կողմից դրամական փոխանցումների տեսակների, այն է՝

3.3.1 մասնավոր փոխանցումներ (ֆիզիկական անձանց միջև փոխանցումներ, ֆիզիկական և տնտեսվարող անձանց միջև փոխանցումներ և այլ նմանատիպ փոխանցումներ),

3.3.2 կոմունալ վճարումներ,

3.3.3 բյուջետային վճարումներ,

3.3.4 կենսաթոշակային, սոցիալական նպաստների վճարումներ,

3.3.5 այլ վճարումներ, որոնք ընդգրկված չեն 3.3.1, 3.3.2, 3.3.3 և 3.3.4 ենթակետերում:

4. Կազմակերպության կողմից հաշվառումը տարվում է ըստ արժույթների, քանակի և ընդհանուր գումարի:
5. Եթե կազմակերպությունը իրականացնում է իր կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունները և սույն կարգով սահմանված հաշվառումը համապատասխան համակարգչային սարքավորման /ծրագրի/ միջոցով, ապա յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում համակարգչային ծրագրից տպվում են սույն կարգով սահմանված հաշվառման տվյալները, ստորագրվում են կազմակերպության ղեկավարի կողմից և կարվում են հատուկ թղթապանակում:
6. Այն դեպքում, երբ սույն կարգով սահմանված հաշվառումը իրականացվում է թղթային եղանակով, ապա այն վարվում է հատուկ մատյանում:
7. Կազմակերպության կողմից ստացված վճարահաշվարկային ծառայությունների մատուցման կարգադրությունները, կատարումը հիմնավորող փաստաթղթերը, սույն կարգում սահմանված հաշվառման տվյալները և կազմակերպության կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների գծով հաշվառման այլ տարրերը պետք է պահպանվեն կազմակերպության կողմից առնվազն 5 տարի: